

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՍԻՑ

«ԱՐՄԵՆԻԱ» հունգարական պատկերազարդ ամսաթերթի խմբագրութիւնից, Ունգարիայի Կերլաչ հալաքաղաքից, ստացանք մի բաժանորդագրական հրաւեր. Թերթի խմբագիրն է պ. Խաչիկ Աստաճատուրեան (իսկ ունգարերէն՝ Kristof Szongett), Հասցէն՝

Szamosujvartt (Audriche-Hongrie, Transilvania).

ԹԻՖԼԻՍԻ Պ. ՆԱՀԱՆԳԱՊԵՒԻ տեղ՝ փոխ-ճահանգապետ պ. Յ. Ալլախովից ստացանք հետեւեալ գրութիւնը.

«Ներքին գործերի մինիստրի հրահանգով առ մէկն սեպտեմբերի Ներկալ Թւականի, 6395 համարով, ուսաց կապեթի թեան մի քանի Ներքին ճահանգների սովեալ գիւղացիների օգտին հաւաքող Նւիրատուութիւնների կազմակերպութեան մասին, կարգադրւած է հետեւելը. Նւիրատուութիւնները կարօտողների օգտին կատարւում են ճահանգական վարչութեան թուղտութեամբ և ճորա հսկողութեամբ՝ ալդ Նւիրատուութիւնների իրանց տեղը հասցնելու վերաբերեալ:

Մինչդեռ տեղական թերթերից մէկի խմբագրութիւնը լրեդհանուր գիտութիւն չաւտարարեց, առանց Նախօրէն թուղտութիւն խնդրելու, որ Նա խօսուտ կարօտեալների զրամական Նւիրատութիւններ կ'ընդունէ և կը հասցնէ Նշանակութեան տեղը:

Ապագայում ծաղելիք թիւրիմացութիւնների դէմն առնելու համար, հարկ եմ համարում ճորից հաստատել, որ ստատոս-սեկրետար Դուրնովօի վերոյիշեալ պահանջները ճիշդ կատարւեն»:

ՊՐ. ԵՐԻԱՆԴ ԴԱԶԱՐԵԱՆԻՆ. Ստացանք Ձեր Նամակը, որը տպել անկարմար գտանք: Սկսող թարգմանութիւնների մասին Նախօրոք չաւտարարելը մենք ոչ միայն դատապարտելի չենք համարում, ալ և ալդ ճոր սկսած սովորութիւնը միայն խրախուսել կարող ենք: Դորանով ոչ ոքին չի արգելւում ճորը գրածքը թարգմանել, բայց շատ դէպքերում ազատում է աւելորդ թարգմանութիւններից:

ԿԱԹՈՂՈՍԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ, „Новое Обозрение“ Թերթի տեղեկութիւններին համաձայն, Պարսկահայերը կաթողիկոսական ընտրութիւններին համար ընտրել են իրանց պատգամաւոր պ. Մահտեսի Սիմէոն Թումանեանին, իբր կանդիդատ՝ պ. Ալեքս. Մելիք-Աղարեանցին:

ՆԵՐԿԱՅ համարում տպւող լօղւածը ֆրանսիական հրիտասարդութեան մասին, „Русская Мысль“ ամսագրից, մեզ ուղարկել է պ. Մկրտիչ Ղազարեան:

«ՄՈՒԻՃ»-Ի 1892 թ. նիւթերի և աշխատակիցների ցանկը, ըստ բաժինների, կը հրատարակւի դալ 12-րդ համարում:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 10-ում, Գոգոլի Տարաս Բուլբաի թարգմանութեան մասին Ե. զրախօսութեան մէջ մի քանի սխալներ են սպրդել. երես 1226 առաջին սիւնեակ, տող 24 տպւած է՝ «հետ նորա հետ», պէտք է լինի՝ նորա հետ. նոյն երես, տող 26 տպւած է՝ Նա վիրաւոր էր կրում, պէտք է լինի՝ Նա վիրաւորաւք էր կրում. երես 1227 առաջին սիւնեակ առաջին տող տպւած է «Ասապի», ուղիղն է Աստապ, նոյնտեղ տող 5, տպւած է «ուր», ուղիղն է՝ «օրինակ» («օրինակ, բացակաւմ է» ե պլն). նոյն երես երկրորդ սիւնեակ տպւած է СЫНУ, ուղիղն է СЫНУ:

Պր. Լ. Դի-ի լօղւածում «Ժողովրդ. կրթութեան գործը ֆրանսիայում», երևք տեղ անգեր բաց են թողւած. երես 1182—83 պէտք է կարդալ՝ և ընկերութիւնը քաղքալեց հէնց պլն պատճառով որ գործի զլուխ էին անցել ժողովրդի կեանքի ալնքան հեռու գանւող մարդիկ:

Երես 1186, տող 11—12 պէտք է կարդալ՝ «...թէ ալժմ արդէն պատրաստւած են ապագալ դաշնակցութեան խմբերը, որոնք աշխատում են ժողովրդի մէջ կրթութիւն տարածել, օրինակ Էլքեֆի «Արդիւնաբերող ընկերութիւնը»...»

Երես 1196, տող 8-րն ներքեից պէտք է կարդալ՝ «Առաջին խոկ տարում բաղմաթիւ ակումբներ շինեցան (երկու ակումբ Մարսէլում—մէկը 16.000, միւսը 2500 անդամներով. նոյնպէս Տաննի, Գեբւիլերի և ալ տեղերի ակումբները)»: